ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2018թվականի N 591

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքում հաստատել.
1)Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.
2. Խորհրդի անդամներին՝
3) մինչև սույն թվականի սեպտեմբերի 1-ը մշակել Հրազդան համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.
4) յուրաքանչյուր տարվա հունվարը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:
3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ Գեղամ Տիգրանյանին՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:
4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

Հավելված N 1
Հրազդան համայնքի ղեկավարի
2018 թվականի հունիսի 7-ի
N 591 որոշման

ԿԱԶՄ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝

1.	խորհրդի ղեկավար	Ա. Դանիելյան /համայնքի ղեկավար/,
2.	խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու	Գ. Տիգրանյան /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3.	խորհրդի քարտուղար	Ս. Օհանյան /համայնքի ղեկավարի խորհրդական/,
4.	խորհրդի անդամներ ՝	
	1)ավագանու անդամ	Վիգեն Գրիգորյան
	2)ավագանու անդամ	Արսեն Հարությունյան
	3)ավագանու անդամ	Հովիկ Պողոսյան
	4)ոլորտային պատասխանատուներ՝	
ա)	հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու	Մայիս Եղիազարյան
բ)	հասարակական կարգի պահպանման պատասխանատու	Աշոտ Միքայելյան
գ)	տրանսպորտային ապահովման պատասխանատու	Գագիկ Ստեփանյան
դ)	կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու	Արմեն Գևորգյան
ե)	բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու	Արփիկ Բաղդասարյան
զ)	կենսաապահովման կազմակերպման պատասխանատու	Հրաչյա Հուսիկյան
է)	կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու	Սամվել Տիգրանյան

ը)	ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու	Մյասնիկ Կոստանյան
թ)	դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու	Հրաչիկ Հովհաննիսյան
ժ)	անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու	Անահիտ Գաբրիելյան
ժա)	խորհրդի անդամ	Սամվել Հարությունյան
ժբ)	խորհրդի անդամ	Պետիկ Մարգարյան
ժգ)	խորհրդի անդամ	Վլադիմիր Գյուրջյան

Հավելված N 2
Հրազդան համայնքի ղեկավարի
2018 թվականի հունիսի 7-ի
N 591 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Հրազդան համայնքի ԱՌԿ խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Հրազդանի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ Համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող բաժինների համար, ինչպես նաև Համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենք կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի նախապատրաստական գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) իրականացնում են համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտում,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) ԱՌՆ և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) Համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածմանը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստում է Համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) իրականացնում է հրդեհների կանխարգելման աշխատանքներ՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) կազմակերպում և անցկացնում է վարժանքներ:

2. ԱՌԿ խորհրդի արձագանքման գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) Համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխումը,

8) շինարարական աղբի տեղափոխումը,

9) ճանապարհների մաքրումը և նոր տարանցիկ ճանապարհների հիմնումը,

10) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրում համայնքի տարածքից ու ճանապարհներից, նոր տարանցիկ ճանապարհների հիմնում, կամուրջների վերականգնում,

11) առաջին օգնության իրականացումը,

12) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողություն,

13) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

14) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը:

15) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

16) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցումը,

17) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպումը,

18) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերումը, գրանցումը և ուղղորդումը համապատասխան սոցիալական ծառայություններ,

19) կազմակերպում է երեխաների վերամիավորումն ընտանիքներին:

20) աղետից հետո կազմակերպում է ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատումը,

21) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

07 հունիսի 2018թվականի N 592

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 20.0քմ մակերեսով 0113-0007 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 7-րդ փողոց 1-ին նրբանցք 18:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2018թվականի N 593

ՏԱՂԱՎԱՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Անահիտ Հունանյանի 2018 թվականի հունիսի 07-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 30 շենքի թիվ 50 բնակարանի բնակչուհի Անահիտ Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 963393, տրված 2001 թվականի դեկտեմբերի 25-ին/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի թիվ 78 շենքին հարող տարածքում գտնվող տաղավարին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զ. Անդրանիկի պողոտա 123/1:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2018թվականի N 594

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի 137-Ն որոշումն՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի «Հրազդան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 136-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները՝

1.Ծախսային մասում՝

1) 9 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի Երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոնի «Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում «225.0» թիվը փոխարինել «325.0» թվով, «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» /4111/ հոդվածում «13906.3» թիվը փոխարինել «13781.3» թվով, «Պարտադիր վճարներ» /4823/ հոդվածում «0» թիվը փոխարինել «25.0» թվով:

2) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2018թվականի N 595

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Անհատ ձեռնարկատեր Լյուդմիլա Թորոսյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև2018 թվականի հունիսի 30-ը/ գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 229, բնակարան 5, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 229, հարող տարածք /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 50 քառակուսի մետր մակերես//:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

07 հունիսի 2018թվականի N 596

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Անհատ ձեռնարկատեր Գայանե Վիրաբյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2018 թվականի հունիսի 30-ը/ գրանցման հասցե՝քաղաք Հրազդան, Խանջյան 21, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Խանջյան 21, /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2018թվականի N 597

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻԿՐՈՇՐՋԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 75 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն և 2006 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1855-Ն որոշումների հաստատված կարգերի, հիմք ընդունելով «Պիռամիդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված գլխավոր հատակագիծը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի թիվ 75 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքին կից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25 և 28 կետերով նախատեսված ինքնակամ իրականացված կառույցները ճանաչել օրինական:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի թիվ 75 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3.Շենքին կից ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 1364.5 քմ, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների

ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է 3-րդ գոտում:
5.Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
6.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
7.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2018թվականի N 598

ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ բաժնի 25 և 32 կետերի, հիմք ընդունելով համապատասխան «Պիռամիդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, Սամվել Սաղիյանի 2018 թվականի մայիսի 22-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 72 շենքի թիվ 22 բնակարանի բնակիչ Սամվել Սաղիյանի կողմից Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 75 շենքի թիվ 2 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 18042014-07-0057, տրված՝ 2014 թվականի ապրիլի 18-ին) առնտրի սրահին կից ինքնակամ կառուցած 16.61 քմ արտաքին մակերեսով մասը:

2. Սույն որոշման ընդունման օրվանից առնտրի սրահին կից ինքնակամ կառուցած մասի օրինականացման համար սահմանված 6500 (վեց հազար հինգ հարյուր) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2018թվականի N 599

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի և որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով համապատասխան «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, Անդրանիկ Գևորգյանի 2018 թվականի մայիսի 16-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի փողոց թիվ 20 տան բնակիչ Անդրանիկ Գևորգյանի կողմից Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Սպանդարյան փողոց թիվ 64 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N17062016-07-0002, գաղտնաբառ՝ VA4VATWQTXD1) բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած 101.26քմ արտաքին մակերեսով հասարակական սպասարկման օբյեկտը, իսկ շինության տակ գտնվող 101.26 քմ հողամասի գործառական նշանակությունը փոփոխել բնակելիից հասարակականի:
2.Սույն որոշման ընդունման օրվանից հասարակական սպասարկման օբյեկտի օրինականացման համար սահմանված 263500 /երկուք հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր/ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2018թվականի N 600

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հողային օրենսգրքի 67 - 70 հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 21-ի N 26-Ն որոշումը, 2018 թվականի ապրիլի 13-ի N 58 որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետը և 2018 թվականի հունիսի 04-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 43 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կենտրոն թաղամասի Զ. Անդրանիկի պողոտա 47/1 հասցեում գտնվող 160.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարել Հրազդան քաղաքի Ավետիսյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 28 տան բնակիչ Ռուբիկ Հայրապետի Պողոսյանին օժանդակ շինություն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռքբերված 160.0 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3.Պարտավորեցնել Ռուբիկ Պողոսյանին օժանդակ շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2018թվականի N 601

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հողային օրենսգրքի 67 - 70 հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 21-ի N 26-Ն որոշումը, 2018 թվականի ապրիլի 13-ի N 58 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և 2018 թվականի հունիսի 04-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 36 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց թիվ 27/2 հասցեում գտնվող 345.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարել Երևան քաղաքի Դավթաշեն 4-րդ թաղամասի 33 շենքի թիվ 82 բնակարանի բնակիչ Հակոբ Սանասարի Պողոսյանին հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռքբերված 345.0 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3.Պարտավորեցնել Հակոբ Պողոսյանին հասարակական սպասարկման օբյեկտի շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2018թվականի N 602

ՋՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 359-Ն որոշման, 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հողային օրենսգրքի 67 - 70 հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 21-ի N 26-Ն որոշումը, 2018 թվականի ապրիլի 13-ի N 58 որոշման 1-ին կետի 11 ենթակետը և 2018 թվականի հունիսի 04-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 38 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ջրառատ թաղամասի Կաքավաձոր տանող ճանապարհ 5/8 հասցեում գտնվող 3057.3 քմ մակերեսով ջրային նշանակության հողամասն աճուրդային կարգով օտարել «Գրին Ֆարմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
2.Աճուրդով ձեռքբերված 3057.3 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2018թվականի N 603

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հողային օրենսգրքի 67 - 70 հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 21-ի N 26-Ն որոշումը, 2018 թվականի ապրիլի 13-ի N 58 որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետը և 2018 թվականի հունիսի 04-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 42 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Միկրոշրջան թաղամասի Զ.Անդրանիկի պողոտա 111/4 հասցեում գտնվող 54.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 217 շենքի թիվ 16 բնակարանի բնակչուհի Նվարդ Արմենակի Սարգսյանին օժանդակ շինություն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռքբերված 54.0 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3.Պարտավորեցնել Նվարդ Սարգսյանին օժանդակ շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2018թվականի N 604

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հողային օրենսգրքի 67 - 70 հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 21-ի N 26-Ն որոշումը, 2018 թվականի ապրիլի 13-ի N 58 որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը և 2018 թվականի հունիսի 04-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 37 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վանատուր թաղամասի Զ.Անդրանիկի պողոտա թիվ 66/8 հասցեում գտնվող 72.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 368 տան բնակիչ Միշիկ Անուշավանի Հարությունյանին հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռքբերված 72.0 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3.Պարտավորեցնել Միշիկ Հարությունյանին հասարակական սպասարկման օբյեկտի շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2018թվականի N 605

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հողային օրենսգրքի 67 - 70 հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 21-ի N 26-Ն որոշումը, 2018 թվականի ապրիլի 13-ի N 58 որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը և 2018 թվականի հունիսի 04-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 41 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վանատուր թաղամասի Զ.Անդրանիկի պողոտա թիվ 87/1 հասցեում գտնվող 80.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 585 տան բնակչուհի Քրիստինե Օնիկի Բաղդասարյանին օժանդակ շինություն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռքբերված 80.0 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3.Պարտավորեցնել Քրիստինե Բաղդասարյանին օժանդակ շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2018թվականի N 606

ԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի, հիմք ընդունելով Գարիկ Հարությունյանի 2018 թվականի մայիսի 31-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի 68 շենքի 03 բնակարանի բնակիչ Գարիկ Հարությունյանին թույլատրել Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Սպանդարյան փողոց 4-4/1 հասցեում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 08052018-07-0077, գաղտնաբառ՝ C5LXMFU6PGBF) հողամասում կառուցել առնտրի սրահ և ավտոտեխսպասարկման կետ:
2.Կառուցման վերաբերյալ նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) հիման վրա մշակել և ներկայացնել համաձայնեցման աշխատանքային նախագիծ:
3.Շինարարական աշխատանքները սկսելուց 3 (երեք) օր առաջ ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հունիսի 2018թվականի N 607

ԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի, հիմք ընդունելով Սոս Ասատրյանի 2018 թվականի մայիսի 22-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 295 տան բնակիչ Սոս Ասատրյանին թույլատրել Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի N295 հասցեում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N 1825475, տրված՝ 2006 թվականի ապրիլի 27-ին) հողամասում կառուցել ավտոտնակ՝ քանդելով սեփականության իրավունքի վկայականում թիվ 5 և 6 համարների տակ նշված սանիտարական մասը և կաթսայատունը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հունիսի 2018թվականի N 608

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 22-ի N 73 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի երաժշտական դպրոցի շենքից 125, 85 քմ տարածք վարձակալության հանձնել Արմեն Մկրտչյանին պարի պարապմունքներ անցկացնելու համար:

Հաշվի առնելով, որ Ա. Մկրտչյանը պատրաստակամություն է հայտնել իր միջոցներով կատարելու տարածքի հիմնական վերանորոգում, յուրաքանչյուր ամսվա համար սահմանել 15000 / տասնհինգ հազար/ դրամ վարձավճար՝ երեք տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հունիսի 2018թվականի N 609

ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 608 և 612-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 22-ի N72 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2016 թվականին <<Հայսեսմշին և ԿՊԳՀԻ>> բաց բաժնետիրական ընկերության կողմից 4-րդ աստիճանի վթարային ճանաչված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 54 շենքի 19-րդ բնակարանի բնակիչ Ռայա Ստեփանի Չալիկյանին բնակարան վարձակալելու համար սահմանել 20000 /քսան հազար/ դրամ յուրաքանչյուր ամսվա համար, մեկ տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2018թվականի N 610

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հողային օրենսգրքի 67- 70 հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 21-ի N 26-Ն որոշումը, 2018 թվականի ապրիլի 13-ի N 58 որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետը և 2018 թվականի հունիսի 04-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 40 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վանատուր թաղամասի Զ.Անդրանիկի պողոտային հարող տարածքում գտնվող 0.03 համակերեսով գյուղատնտեսական նշանակության (այլ հողատեսք) հողամասն աճուրդային կարգով օտարել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 253 տան բնակիչ Վասակ Սլավիկի Վարդանյանին՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:
2.Աճուրդով ձեռքբերված 0.03 հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2018թվականի N 611

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հողային օրենսգրքի 67- 70 հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 21-ի N 26-Ն որոշումը, 2018 թվականի ապրիլի 13-ի N 58 որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետը և 2018 թվականի հունիսի 04-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 39 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վանատուր թաղամասի Զ. Անդրանիկի պողոտա 58/8 հասցեում գտնվող 333.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 228 շենքի թիվ 9 բնակարանի բնակիչ Նորիկ Միանիկի Մկրտչյանին օժանդակ շինություն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռքբերված 333.0 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3.Պարտավորեցնել Նորիկ Մկրտչյանին օժանդակ շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2018թվականի N 612

ԴՐԱՍՏԱՄԱՏ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրամադրված հողամասի հատակագծերը և Դրաստամատ Ղարիբյանի 2018 թվականի հունիսի 6-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 42 տան բնակիչ Դրաստամատ Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 21122016-07-0036, գաղտնաբառ՝ G6S6TTS5IA6J/ Հրազդան քաղաքի, Կենտրոն թաղամասի, Զորավար Անդրանիկի պողոտա թիվ 54/3 հասցեում գտնվող հողամասի 228.41քմ մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա թիվ 54/4,

721.37քմ մակերեսով մասինը՝ թողնելով նույնը՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա թիվ 54/3 :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2018թվականի N 613

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՈՒ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2018 թվականի մայիսի 16-ի թիվ 14 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2018թվականի հունիսի 1-ի N 548 գրավոր առաջարկությունը և Բավական Հախվերդյանի կողմից տրված 2018 թվականի հունիսի 4-ի թիվ 349 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամաս թիվ 53/3 հասցեում գտնվող՝ 34.56քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
2.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս թիվ 53/3 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 34.56քմ մակերեսով ավտոտնակը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25052018-07-0090 գաղտնաբառ՝ GAKDGUBWIJ2R/ գինը սահմանել 45000 /քառասունհինգ հազար/ դրամ և նույն հասցեում տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 34.56քմ մակերեսով հողամասը 43000 /քառասուներեք հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի թիվ 53 շենքի 29 բնակարանի բնակչուհի Բավական Հախվերդյանին (այսուհետ գնորդ):
3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:
4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2018թվականի N 614

ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հողային օրենսգրքի 67 - 70 հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 21-ի N 26-Ն որոշումը, 2018 թվականի փետրվարի 21-ի N 30 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը և 2018 թվականի հունիսի 04-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 44 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 2/2 հասցեում գտնվող 900.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարել Հրազդան քաղաքի Ռ. Միքայելյան փողոցի 5-րդ շենքի թիվ 13 բնակարանի բնակչուհի Ալինա Աշոտի Ոսկանյանին հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռքբերված 900.0 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3.Պարտավորեցնել Ալինա Ոսկանյանին հասարակական սպասարկման օբյեկտի շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2018թվականի N 615

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2018 թվականի մայիսի 16-ի թիվ 13 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2018 թվականի հունիսի 1-ի N 547 գրավոր առաջարկությունը և Հայկ Սուքիասյանի կողմից տրված 2018 թվականի հունիսի 4-ի թիվ 346 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Վանատուր թաղամաս 433/2 հասցեում գտնվող՝ 42.27քմ մակերեսով տնտեսական շինությունը ճանաչել օրինական:
2.Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 433/2 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 42.27քմ մակերեսով տնտեսական շինությունը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25052018-07-0103 գաղտնաբառ՝ XEX5BJ28Q65M/ գինը սահմանել 110000 /մեկ հարյուր տասը հազար/ դրամ և նույն հասցեում տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող տնտեսական շինության համար առանձնացված 42.27քմ մակերեսով հողամասը 53000 /հիսուներեք հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 433 տան բնակիչ Հայկ Սուքիասյանին (այսուհետ գնորդ):
3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով տնտեսական շինության համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:
4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2018թվականի N 616

ՍԱՄՎԵԼ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սամվել Աբգարյանի 2018 թվականի հունիսի 12-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 233 տան բնակիչ Սամվել Աբգարյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 1077708, տրված՝ 2005 թվականի փետրվարի 04-ին/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 300 շենքին հարող տարածքում գտնվող ավտոտնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 300/1:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2018թվականի N 617

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Մարինե Մնացականյանի 2018 թվականի հունիսի 12-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Մարինե Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 1028050, տրված՝ 2003 թվականի մարտի 17-ին/ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 18 շենքի առաջին հարկում գտնվող ոչ բնակելի տարածքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 18/1 :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2018թվականի N 618

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Դանյուտա Օհանյանի 2018 թվականի հունիսի 8-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մերյոժա Օհանյանին /ներկայումս հանգուցյալ, մահվան վկայական՝ ԱԲ N 289824, տրված՝ 2018 թվականի մայիսի 14-ին/ սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝2186301, տրված՝2006 թվականի հունիսի 30-ին/ Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 431ա հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 431/1 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2018թվականի N 619

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՄԱՍԻ, ԿԻՍԱՆԿՈՒՂԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՄԱՍԻ, ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի և հիմք ընդունելով Սուսաննա Ներսիսյանի 2018 թվականի հունիսի 5-ի դիմումը, Հրազդան նոտարական տարածքի նոտարի կողմից 2018 թվականի հունիսի 4-ին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված գրանցամատյանում՝ թիվ 1136-ով, ժառանգական գործ 28, ՀՍՍՀ Հրազդանի տեխնիկական գույքագրման բյուրոյի կողմից 1987 թվականի ապրիլի 25-ին տրված բնակելի տան տեխնիկական անձնագիրը, համապատասխան որակավորում ունեցող «ՊԻՌԱՄԻԴԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինական ճանաչել Սուսաննա Ներսիսյանին պատկանող Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս թիվ 511 հասցեում գտնվող 1260.0քմ հողամասում բնակելի տան ինքնակամ կառուցած 53.88քմ արտաքին մակերեսով մասը, ինքնակամ կառուցած 41.7 քմ արտաքին մակերեսով կիսանկուղը, անասնաշենքի ինքնակամ կառուցած 10.16քմ արտաքին մակերեսով մասը, ինքնակամ կառուցած 6.12քմ արտաքին մակերեսով կաթսայատունը:

2.Հողամասի սահմանները որոշվում են «ՊԻՌԱՄԻԴԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3.Բնակելի տան ինքնակամ կառուցած մասը, կիսանկուղը, անասնաշենքի ինքնակամ կառուցած մասը, կաթսայատունը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:

4.Բնակելի տան ինքնակամ կառուցած մասը, կիսանկուղը, անասնաշենքի ինքնակամ կառուցած մասը, կաթսայատունը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2018թվականի N 620

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և տրված շինության, դրասպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2018 թվականի հունիսի 5-ի թիվ 19 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 122ա շենքի թիվ 10 բնակարանի բնակչուհի Գայանե Արաբաջյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Մ.Բաղրամյան թաղամասի 5-րդ փողոց 2-րդ նրբանցք 76 հասցեում գտնվող, Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 68.56քմ ընդհանուր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 68.56քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

2.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2018թվականի N 621

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Անհատ ձեռներեց Էդգար Մարտիրոսյանին տալ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը, /գրանցման հասցե՝ Գեղարքունիքի մարզ, Դդմաշեն 11 փողոց-15, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Ջորավար Անդրանիկի պողոտա, /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն//:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ*